

VIII. ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ  
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՓԱՍՏԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2015թ.-ի համար հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան ճշտված նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- «Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» (01.03.02.01) ծրագրով առ 01.01.2016թ. հատկացվել է 1 107 617.40 հազ. դրամ: 2015թ.-ին դրամարկղային ծախսը կազմել է 1 091 138.76 հազ.դրամ, որը 2014թ.-ին կազմել էր 873 851.91 հազ. դրամ, այսինքն՝ 2014թ. համեմատությամբ դրամարկղային ծախսը աճել է 217 286.85 հազ. դրամով, ինչը պայմանավորված է 2014թ. հուլիսի 1-ից աշխատավարձի բարձրացմամբ և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշիվի նկատմամբ կազմել է 99%:
- «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» (01.03.02.02) ծրագրի հիմքում ընկած են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության, սպառողական ապրանքների գների դիտարկման, գյուղական համայնքների, աշխատուժի հետազոտության և սոցիալ-տնտեսական բնույթի այլ սկզբնական տեղեկատվության հավաքագրումը: Ծրագրով առ 01.01.2016թ. հատկացվել է 727 558.70 հազ. դրամ: 2015թ.-ին դրամարկղային ծախսը կազմել է 711 461.07 հազ. դրամ, որը 2014թ.-ին կազմել էր 566 662.76 հազ. դրամ, այսինքն՝ 2015թ.-ին դրամարկղային ծախսը 2014թ. համեմատությամբ աճել է 144 798.31 հազ. դրամով, ինչը պայմանավորված է 2014թ. հուլիսի 1-ից աշխատավարձի բարձրացմամբ և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշիվի նկատմամբ կազմել է 98%:
- «ՀՀ 2014թ. գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» (04.02.01.19) ծրագրի հիմքում ընկած է ՀՀ 2014թ. իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների ամփոփումը: Ծրագրով առ 01.01.2016թ. հատկացվել է 127 492.30 հազ. դրամ: 2015թ.-ին դրամարկղային ծախսը կազմել է 123 409.50 հազ. դրամ, որը 2014թ.-ին կազմել էր 139 036.31 հազ. դրամ, այսինքն՝ 2014թ. համեմատությամբ նվազել է 15 626.81 հազ. դրամով, քանի որ որոշ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտություն չի առաջացել: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշիվի նկատմամբ կազմում է 97%:
- «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» (10.09.02.02) ծրագրով առ 01.01.2016թ. հատկացվել է 25 344.00 հազ. դրամ: 2015թ.-ին դրամարկղային ծախսը կազմել է 24 232.03 հազ. դրամ, որը 2014թ.-ին կազմել էր 42 792.00 հազ. դրամ, այսինքն՝ 2014թ. համեմատությամբ դրամարկղային ծախսը նվազել է 18 559.97 հազ. դրամով, քանի որ 2015թ.-ին բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման համար նախատեսված ընդհանուր գումարը ՀՀ պետական բյուջեից ուղղակիորեն տրամադրվում է ՀՀ առողջապահության նախարարությանը: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշիվի նկատմամբ կազմել է 96%:
- «Արտասահմանյան պաշտոնական գործուղում» (01.01.03.04) ծրագրի հիմքում ընկած է պաշտոնական գործուղումը դեպի Նյու-Յորք՝ Միավորված ազգերի

կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի 46-րդ նստաշրջանին մասնակցելու համար: Ծրագրով առ 01.01.2016թ. հատկացվել է 2 559.67 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 2559.67 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշվի նկատմամբ կազմել է 100%:

- Միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի մասով - «Մարդահամար 2011 դրամաշնորհային ծրագրի» շրջանակում մնացորդն առ 01.01.2015թ.՝ 86.24 հազ. դրամ է, որը 05.02.2015թ.հաշվեգրվել է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին: «Աշխատանքի միջազգային կազմակերպության և Մաստեր-Քարդ հիմնադրամի Work 4 Youth ծրագրի» հիմքում ընկած է 15-29 տարեկան երիտասարդների զբաղվածության հիմնահարցերին առնչվող տեղեկատվության հավաքագրումը, ՀՀ աշխատանքի շուկան բնութագրող տեղեկատվության ապահովումը, հետազոտության արդյունքների ամփոփիչ զեկույցի պատրաստումը: Ծրագրի շրջանակում մնացորդն առ 01.01.2015թ. կազմել է 6 446.82 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 6 393.77 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշվի նկատմամբ կազմել է 99%: «Գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման համար ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրվող դրամաշնորհային ծրագրի» շրջանակում մնացորդն առ 01.01.2015թ. կազմել է 5 185.29 հազ. դրամ, որը նախատեսվել է ԳՀՀ տվյալների բազայի ձևավորման համար սերվերի և սերվերի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթի ձեռքբերման համար: Դրամարկղային ծախսը կազմել է 4 795.00 հազ. դրամ, իսկ 390.29 հազ. դրամ մնացորդը ետ է վերադարձվել ԱՄՆ միջազգային կազմակերպությանը, քանի որ սերվերի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթ ձեռք չի բերվել: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշվի նկատմամբ կազմել է 92%: «2015թ. Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն» ծրագրի հիմքում ընկած է ՀՀ բնակչության, առողջության և սնուցման վերաբերյալ տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և ներկայացումը: Ծրագրի շրջանակում նախատեսվել է 275 548.10 հազ. դրամ, իսկ փաստացի մուտքը կազմել է 219 443.99 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 149 536.44 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը ճշտված նախահաշվի նկատմամբ կազմել է 54%: Ճշտված նախահաշվի նկատմամբ էական շեղումը պայմանավորված է «Այ-Սի-Էֆ» ինթերնեյշնլ ընկերության փորձագետի այցի ուշացման հետ կապված մեկ ամսով դաշտային և մուտքագրման աշխատանքների հետաձգմամբ, գնումների պլանով նախատեսված որոշ գնման ընթացակարգերի չկայացմամբ, ինչպես նաև հայտարարված մրցույթների արդյունքում պայմանագրերի ավելի էժան կնքմամբ: